23.12.2020
346-78

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
պարոն Արման Թաթոյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թաթոյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.
2. 2020թ. Արցախյան պատերազմում առայսօր քանի՞ զոհ ունի հայկական կողմը (խնդրում ենք առանձնացնել ռազմական և քաղաքացիական զոհերի տվյալները)։ Խնդրում ենք նշեք, թե նրանցից քանիսն են զոհվել 2020թ. նոյեմբերի 9-ի հրադադարից հետո։
3. 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքով քանի՞ վիրավոր ունի հայկական կողմը (խնդրում ենք առանձնացնել ռազմական և քաղաքացիական վիրավորների տվյալները)։ Խնդրում ենք նշել, թե նրանցից քանիսն են վիրավորվել 2020թ. նոյեմբերի 9-ի հրադադարից հետո։
4. 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքով քանի՞ անհետ կորած ունի հայկական կողմը։ Նշեք, թե նրանցից քանիսն են անհետացել 2020թ. նոյեմբերի 9-ի հրադադարից հետո։
5. 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքով քանի՞ գերի ունի հայկական կողմը Ադրբեջանական կողմում։ Խնդրում ենք նշել, թե գերիներից քանիսն են գերեվարվել 2020 թ. նոյեմբերի 9-ի հրադադարից հետո։
6. 2020թ. Արցախյան պատերազմի հետևանքով հայկական կողմի զոհերից քանիսի մարմինների վրա են հայտնաբերվել կտտանքների հետքեր։
7. 2020 թ. Արցախյան պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության քանի՞ բնակիչ է կորցրել իր տունը ԱՀ-ում։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Ուշադրություն՝ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am